Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ս/թ. նոյեմբերի 4-ին, ժամը **11:00**-ին Հայաստանի շախմատի ակադեմիան կազմակերպում է «Շախմատի ակադեմիայի գավաթ - 2023» արագ շախմատի մրցաշարի առաջին փուլը:

Մասնակիցներ

Մրցաշարին կարող են մասնակցել առնվազն երրորդ կարգ ունեցող շախմատիստները: Մրցաշարը կանցկացվի շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով՝ համաձայն ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների:

Ժամակարգ

5 րոպե ամբողջ պարտիայի համար՝ յուրաքանչյուր քայլի համար 3 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Լրացուցիչ ցուցանիշներ

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները չեն կիսվում, իսկ տեղերը կորոշվեն. հատված Բուհգոլցով, այնուհետև Բուհգոլցով, անձնական հանդիպումների արդյունքի /արդյունքների/ և սև գույնով խաղացած պարտիաների քանակով:

Մրցանակային ֆոնդ

Մրցանակային ֆոնդը կկազմի մուտքավճարների 60%-ը:

Մրցանակներ					
Հիմնական	**I**	**II**	**III**	**IV**	**V**
Լավագույն արդյունք ցույց տված **շախմատիստուհի**					
Լավագույն արդյունք ցույց տված **կարգային** մասնակից					
Լավագույն արդյունք ցույց տված մինչև **12** տարեկան մասնակից					
Մարզերի լավագույն արդյունք ցույց տված մասնակից					

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները չեն կիսվում:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ստանալու միայն մեկ մրցանակ:

Մրցաշարի մասնակցության բոլոր ծախսերը հոգում է գործուղող կազմակերպությունը:

Մուտքավճար

Կոչում/գործակից	Մուտքավճար
ՄԳ, ՄՎ, ՖՎ, ԿՄԳ	Անվճար
2100 և բարձր վարկանիշ ունեցող մասնակիցներ	2 500 ՀՀ դրամ
III,II, I կարգ – 2100 վարկանիշ ունեցող մասնակիցներ	3 000 ՀՀ դրամ

Ցուցակագրումը մինչև **նոյեմբերի 3-ը, ժամը 18:00-ն:**

Հեռախոսահամար՝ **010-448479, 043-448473:**